Գ Ր Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն Ք

ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱԾ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

Ո՛վ լռակեաց լուսին և երկնային պայծառ աստղեր, դուք որ ձեր յաւիտենական հայեացքներով դիտում էք աշխարհը, լուսաւորում էք մութ խորխորատներ, խաղ էք անում խոր ծովերի շաչող ալիքների հետ և կեանք ու ոգի էք ներշնչում լքուած սգաւորին, ասացէք, մի՞թէ կապոյտ երկնքի տակ կա՞յ մի աւելի սգաւոր վայր, քան այս մահուան հովիտը, որի վերայ ընկած հառաչում են երկու հայկական կիսակործան տաճարներ լո՜ւռ ու սգաւոր, մինա՜կ ու տխո՜ւր։...

Դո՛ւք, ո՛վ վերջալոյսի ոսկեզօծ ամպեր, դուք որ այնքան վեհ էք ու թովիչ, դուք որ հրդեհում էք ահեղ ովկիանոսի ալիքները և խաղ էք անում լեռնային հպարտ գագաթների հետ, դուք որ կարում ու անցնում էք հեռո՜ւ հեռո՜ւ տարածութիւններ, ասացէ՛ք, մի՞թէ ձեր ոսկեզօծ ճառագայթները լուսաւորե՞լ են երբ և է՛ մի աւելի խեղճ ու սգաւոր վայր, քան այս լռակեաց հովիտը։...

Եւ դո՛ւք, երեկոյեան խորհրդաւոր քամիներ, դուք որ արտասւում էք բաց երկնքի տակ ընկած դիակի վերայ, դուք որ մահուան յաւիտենական ողբն էք երգում անձայն աւերակների լուռ պատերի մէջ, և սիրում էք հանգստանալ ու նուագել լեռնային խորունկ քարանձաւներում, ասացէք ինձ, տեսե՞լ էք մի աւելի ցաւագար ու սգաւոր վայր, քան այս ահարեկ հովիտը իր աւերակների կոյտերով։... Իսկ գեղադէմ լուսինն ու փայլփլող աստղերը, վերջալոյսի շողերով հրդեհուած ամպերն ու հանդարտ քամիները՝ եկան ու անցան մէկիկ մէկիկ և անզօր հանդիսացան ամոքելու իմ վշտացած սիրտը, որը չէր կարող ազատ շունչ քաշել այնտեղ այն աւերակների լուռ պատերի մէջ, ուր օդը ծանրացել էր մամռոտ քարերի արձակած հառաչանքներից և ուր զգացւում էր գերեզմանի խոնաւութիւնը։

Այո՛, գերեզման էր այն սգաւոր հովիտը, որի մէջ թաղուած էին յօշոտուած մարմիններով այն կիսակործան աւերակները։ Քրիստոնէական տաճարներ են նրանք, ուր երբեմն հնչուել է ապաշխարութեան հեկեկանքը և աղաչանքի մրմունջը, սակայն այսօր կորցրած փառք ու վայելչութիւն՝ նրանք ընկած են գետնի վերայ և հառաչում ու հեկեկում են հազար ու մի վէրքերի ցաւերով։

Ամառային արեւի այրող ճառագայթների տակ՝ հեւում էին այդ լուռ աւերակները քարշ քցած իրանց սգաւոր գլուխները. իսկ նրանց կիսակործան շէնքերի մէջ կենդանիներն էին ապաստան գտել՝ ցերեկուայ այրող տապից պաշտպանուելու համար։ Սակայն ինչ՞ էր այդպէս ճնշում ու տանջում ինձ այդ սգաւոր հովիտը՝ իր երկու աւերակների քարաբլուրներով։ Չէ՞ որ այդ հինաւուրց աւերակները շա՜տ բաներ ունէին ինձ ասելու՝ անցեալ փառքի օրերից, երբ երկնքից ուրախ էր անցնում գեղադէմ լուսինը և այսօրուայ նման երեկոյեան քամին չէր գալիս ու աղմկում իր սգաւոր պատերի մէջ և չէր մորմոքում ինչպէս մահամերձ մարդու վերջին շնչառութիւն։... Եւ սակայն այնտեղ, այն ամայի վայրում, ամէն մի չորացած բոյս ու մացառ, ամէն մի քարի կտոր խօսում էր ու լալիս, ողբում ու հեկեկում, և ես ի զուր յուսացի լսել այնտեղ ուրախացնող մի լուր, յուսատրող մի ձայն։

Եւ դու այդքան անգութ ես եղել, ո՜վ սեւ ճակատագիր, որ անցած ու գնացած տասնեակ դարերի խորերից ոչ մի ուրախացնող

digitised by A.R.A.R.@

բան չունիս մեզ ասելու, և նահատակ ժողովրդի սգաւոր արձանների այցելուն՝ այսօր լոկ պիտի անիծէ՜ ու անիծէ՜ քեզ։ …

*

Այնտեղ՝ աւերակների հիւսիսային կողմից՝ յուսահատական հառաչանքներով գետն էր հոսում ու վրդովում շրջապատի խորհրդաւոր լռութիւնը։ Նրա նուաղած գոռումը իմ սիրտը լցրեց մի անսովոր զգացմունքով. և իմ սիրտը գործ էր դնում մի գերմարդկային ճիգ, որ օդ գտնի և չխեղդուի։ Կուրծքս սեղմւում էր հեղձնուէ, և ես կամենալով գէթ մի րոպէ հեռացնել իմ աչքի առջեւից այդ սգաւոր պատկերը՝ քայլերս ուղղեցի դէպի հառաչող գետը, որ պտոյտ տալով անյայտանում էր բարձրաբերձ կիրճերի խորքերում։ Մահուան մի անսովոր սուգ ու ողբ էր արձակում հառաչող գետը։ Նրա ալիքների աղմուկը կատաղի չէր՝ ինչպէս առիւծի մռնչոցը, և ահաւոր ու սարսեցնող չէր՝ վագրի ոռնոցի նման, այլ նա նուաղած էր ու յուսահատ՝ ինչպէս մի արնաքամ որս, որ հառաչում է՝ իրան պատառ—պատառ անողի անողորմ ճանկերի մէջ։

Ես կանգ առայ գետի ափին և լսեցի նրա թախծագին հեկեկանքը. որը նման էր մի վշտացած մօր մրմունջների, երբ նա իր սիրասուն զաւկի արնոտ դիակի մօտ նստած՝ ողբում է նրա կորուստը։ Եւ գետը թաւալգլոր կտրում ու անցնում էր իր յուսահատական ուղին, և գնալով կորչում էր անյայտ տարածութիւնների մէջ իր մշտական նուագումներով։ Իսկ այդ տանջանքի րոպէին ես լսում էի նաեւ իմ սրտի աղմուկը, որ իր միալուր բաբախներով կտրում ու անցնում էր մարդկային կեանքի արիւնոտ ճանապարհը։ Երկուսն էլ պանդուխտներ էին, երկուսն էլ օտարներ —, այս անցողիկ աշխարհի ժամանակաւոր հիւրերը։ Եւ սակայն ինչի՞ իմ սրտի—հոգու և այս շրջապատի մէջ՝ դրուած էր մի անքննելի կապ, ինչի՞ ես ինձ զգացի այդ վշտաւոր բնութեան մի անբաժան մասնիկը, և ինչի՞ իմ հոգին անդրադարձնում էր անցած ու գալիք տանջանքների հառաչն ու սարսափը։

Ո՜ դարերի ցաւեր ու հառաչանքներ, ես ձեր հարազատ զաւակն եմ և ձեր անբաժան մասնիկը, ո՜վ մշտահառաչ գետ և արեան հովիտ։ . . .

Գետի նուաղած գոռումը քանի գնում այնքան աւելի էր սաստկանում, և միախառնուելով իմ սրտի արտասովոր բաբախի հետ՝ առաջ էր բերում մի յուսահատ մխոր, մի տարօրինակ վայում ու կոծ։

Մի խոր հառաչանքով իմ մնաս բարեւն ասացի հայրենի գետին, և գլխակոր ու տխուր՝ իմ քայլերն ուղղեցի դէպի սգաւոր աւերակները, որոնք մի անսովոր թափով ինձ քաշում էին դէպի իրանց ցաւագար գիրկը, ինչպէս մի վշտոտ մայր, որ իր գերագոյն տանջանքի ժամերին անգամ չի մոռանում իր սիրասուն զաւակին։

Նայում եմ չորս կողմս, ականջ եմ դնում անվերջ, սակայն չկայ ու չեմ լսում ոչ մի ձայն, ոչ մի աղաղակ՝ բացի հառաչող գետի յուսահատ կոծը։ Նայում եմ շուրջս թափուած հայրենի տաճարների քարուքանդ բեկորներին և նորից սուզվում դարերի խորքը, նորից յիշում անվերջ տանջանքների արիւնոտ շղթան։

Կան աւերակներ, որոնք իրանց քարուքանդ դրութեան մէջ անգամ վեհ են, ահեղ ու հսկայ. տեսել եմ այնպիսիները՝ որոնք աւելի խորհրդաւոր են ու խօսուն՝ քան իրանց կանգուն ժամանակ։ Սակայն նա՛, որի մօտ այսօր հառաչում ու կոծում է իմ սիրտը, նա արթնացնում է իմ հոգու մէջ միայն ու միայն խեղճութիւն, լաց, անտէրութիւն։ Ո՜ խեղճ տաճարներ, գուցէ այդ է պատճառը՝ որ երկնքից թռչունները անգամ չեն գալիս հանգիստ գտնելու ձեր կիսաւեր կամարների տակ և իրանց երգերով վրդովելու ձեր մեռելային լռութիւնը։

Մի ինչ որ ցաւալի և տխուր բան էին ասում ինձ այդ լուռ աւերակները, որ տխրահառաչ հեկեկանքների նման գալիս հասնում էր իմ ականջին. իսկ այդ ձայների ազդեցութեան տակ՝ իմ հոգին զգում էր մի ճնշում, մի սարսափ. և ես քարշ գցած իմ գլուխը երկա՛ր ու երկա՛ր լսում էի այդ տարօրինակ մրմունջն ու հեկեկանքը։

Այդ վիրաւոր ու ջախջախուած հսկաներն

digitised by A.R.A.R.@

յանկարծ ինձ պատկերանում էին՝ կանգուն ու խրոխտ. ես տեսնում էի վխտացող մի ահաւոր ամբոխ, հանդիսաւոր գնացքների մի հսկայական շրինգ, և այդ այն ժամանակն էր՝ երբ Մահուան հովիտը դեռ եւս կենդանի էր, արեան լճեր չկային այդ աւերակների շուրջը. իսկ աղմկող գետը անյոյս վիրաւորի նման չէր արձակում մի անվերջ հառաչ։

Սակայն չէր անցնում մի քանի րոպէ, երբ ես այդ խոր պատարկութեան միջից, որպէս մի ահաւոր անդունդի խորքից՝ լսում էի ախրահառաչ, ծա՜նր ու երկա՜ր մեղեդիներ, որոնք միայն «ա՜խ» ու «վա՜յ» էին արձակում։ Տարօրինակ հառաչանքներ, որ մի անսովոր սարսուռով լցրին իմ հոգին։

— «Այդպէս է լացել ու հառաչել անցած սերունդը, այդպէս է անյոյս հեկեկացել նա այս սեւ պատերի մէջ»։ Դա սեւ լռութիւնն էր, որ խօսեց խաւարի միջից՝ ինձ ուղղելով իր դաժան հայեացքը։

— «Սակայն ինչի՞ էր նա հառաչում ու լալիս, երբ կարող էր խրոխտ լինել ու յանդուգն, ասացի ես, երբ կարող էր մեռնել առանց արտասուելու և ընկնել հպարտ քըրքիջներով»։

— «Այս սեւ պատերի մէջ փառաբանուել է միայն հեզութիւնը, ներումն ու սէրը» ...

— Ո՛, հերի՜ք է, պատասխանեցի ես»...

Եւ ե՞րբ էր այդպէս. այն ժամանակ՝ երբ մարդ՝ գազանի գերագոյն հաճոյքը իր նմանին յօշոտելու, պատառ պատառ անելու մէջ էր կայացնում։... Անմ՜րգ ու սո՜ր արարածներ, որ ամօթ ու արատ հանդիսացաք դարերի և մարդկութեան ճակատին. լպի՛րշ և անգո՛ւթ հոգիներ, որ ձեզ միշտ խորթ ու անհասկանալի մնաց սիրոյ և եղբայրութեան աստուածային քարոզը։ ...

*

Այնտեղ՝ աւերակների արեւմտեան կողմում, մոխրագոյն բլրակի վերայ գտնւում էր հսկական գիւղը — ծերունի Խօշավանքը։ Տարօրինա՜կ պատկեր։ ... Իրար վերայ թափուած խուղերն աւելի անշուք ու խեղճուկ էին՝ քան կենդանիների որջերը։ Մարդիկ վտիտ ու դանդաղ անց էին կենում նեղ ու անշուք անցքերից, և իրանց անհետաքրքիր հայեացքները վայրկենապէս դարձնում էին դէպի օտար այցելուն։ Երկու հազար տարուց աւելի է՝ որ այդ մարդկանց նախահայրերը բնակութիւն են հաստատել այդ բարձրաւանդակի վերայ, հառաչող գետի ափին, և սակայն այսքան երկար ժամանակ նրանց քաղաքակրթական կեանքի անիւը երբէք չէ շարժուել դէպի առաջ։ Ինչի՞. Նա՞, այդ ժողովո՞ւրդն էր առաջադիմելու անընդունակ, թէ մի այլ անգութ ձեռք է խոչընդոտ հանդիսացել նրա աստիճանաբար զարգացման, նրա առաջադիմութեան։ ...

— «Ո՛չ, մենք չենք մեղաւորը, մենք քաղաքակրթութեան սիրահարներ ենք, մենք առաջադիմութեան կարապետներ էինք, — աղաղակեցին ինձ այդ անշուք խուղերի միջից վեր բարձրացող հսկական հին տաճարի երկու կաթուղիկէները —, սակայն մենք ստիպուած եղանք կանգ առնել և յանուն մեր սիրած գաղափարի՝ մեր արիւնով լուալ այս խուղերն ու Մահուան հովիտը։ ... Տե՛ս, ոսկորներից են շինուած այն բլուրները, իսկ այն լերան կուրծքը պատառող խորխորատից՝ արիւնն է միշտ վայր հոսել ջրվէժի նման»։ ...

*

Օրը մթնել էր. վերջալուսի ոսկեգոյն ճառագայթները որպէս մի հսկայական հրդեհ՝ հեռու արեւմուտքում վառւում էին կարմիր գոյնով և մի ահաւոր տեսք էին պարգեւում այն խորհրդաւոր երկնքին։ Ստուերները կամաց—կամաց վար իջան լեռներից, և խորհրդաւոր խաւարը սկսեց իր սեւ վերարկուն տարածել այդ լուռ տարածութեան և Մահուան հովտի վերայ։ Սիրտս լցուեց մի նոր զգացմունքով, և ես մոխրապատ բլրի վերայից, մին մենակ իմ քայլերս նորից ուղղեցի դէպի Մահուան հովիտը։ Եւ հասնելով այն սեւ աւերակներին, ես այնտեղ լսեցի խեղդող խաւարի լացը, որ հեծեծում էր իր անվերջ արցունքներով։ Այստեղ երբեմն—երբեմն դալիս ու կանգ էր առնում աստանդական քամին, աւերակների այդ մշտանջե-

digitised by A.R.A.R.@

նական այցելուն, և իր կոծն ու վայինը խառնելով խեղդող խաւարի սրտաճմլիկ լացի հետ՝ արձակում էր մի թախծալի հառաչ, մի անօրինակ հեծեծանք, և ապա նուաղում էր ու թուլանում՝ ինչպէս մի վշտացած սգաւոր իր գերմարդկային տանջանքների ազդեցութեան տակ։ Ես հազիւ էի կարողանում շունչ քաշել, և հառաչանքների մի երկար ու ցաւագար մեղեդի դուրս էր թռչում իմ կրծքից և նուաղում ու մարում էր այդ սգաւոր աւերակների սեւ պատերի մէջ։ ...

Սեւ գիշեր։

Այնտեղ կարծես բնութիւնը չէր կարող ներհել . . . ամէն մի բոյս, ամէն մի մամուռ, խոտ ու քարեր՝ ձայն էին արձակում խաւարի մէջ և մի տարօրինակ շշուկով մրմռում էին այդ սգաւոր վայրենի քունը։ Սեւ լռութիւնը մի խորհրդաւոր լեզու ունի, որ մատչելի է միայն նրանց՝ որոնց հոգին ցաւագար է, և սիրտ՝ վշտերի ծով։... Իսկ նա՝ այդ ահաւոր լռութիւնը՝ ո՞րտեղ կարող էր գտնել մի աւելի ցաւագար հոգի և վշտերի ծով դարձած մի սիրտ՝ քան այդ մահուան հովտում, հայկական այդ կործանուած տաճարների աւերակների մէջ։ Շատ բաներ ունին այնտեղ իրար ասելու խաւարն ու լռութիւնը. նրանք մի առանձին սիրով, ուշ գիշերին գալիս գտնում են իրար այդ աւերակների լուռ պատերի մէջ, և որպէս կարօտած սիրահարներ՝ գաղտագողի թաքնվում են այն խորշերի մէջ, և փսփսում են իրար ականջի ինչ որ սի՞րու պատմութիւններ հեռո՞ւ հեռո՞ւ դարերից, անցած ու գնացած ցաւոտ հոգիների անդարման վէրքերից։ ...

Եւ ես որպէս մի գիշերային ուրուական, որ լուռ թափառում է աստղերի ներքեւ, կանգնած այդ խորշերի առջեւ՝ լսում էի գիշերուայ կիսին՝ ականջիս հասնող մի անորոշ շշունջ, լսում էի մի ծանր և յուսահատական հառաչ, որ մերթ ընդ մերթ արձակում էր այն ահաւոր լռութիւնը՝ խաւարի պատմութիւնը լսելիս։ ... Մի թաց խոնաւութիւն էր սփռում օդի մէջ, և ինձ թւեց թէ հեծեծող խաւարի արցունքն է դա, որ թրջում է աւերակ տաճարների քարերը։

Ահաբեկուած այդ վշտաւոր հոգիների արձակած հառաչանքներից, ես իմ սրտի կոծը միացրի նրանց շշունջների հետ, և այդ մըշտաւոր ներդաշնակութեան մէջ ըմբռնեցի սըգաւոր հոգիների ամբողջ էութիւնը։ Ես այդ ժամանակ զգացի որ իմ հոգին մի աննշան հիւլէ չէ, որ պիտի նուաղի ու կորչի ցաւերի այս անհունութեան մէջ, այլ մի ահաւոր շանթ է, որ պիտի փայլատակէ խաւար անեզրութեան խորխորատներում և պիտի պատմէ ինձ նմաններին՝ հոգու ցաւերից, սրտի տանջանքներից, որոնք այնքան վշտոտ են ու ցաւոտ և որոնք այնքան հաւանալի պիտի լինին այս աւերակների հարազատ զաւակների համար։

Մի սեւ ու խորհրդաւոր գիշեր էր այն գիշերը, որ իր հսկայական թեւերը տարածել էր այդ աւերակների վերայ։ Նա կարծես կամենում էր որ խոր թաքցնէ բնութեան այդ վշտոտ զաւակի վշտոտ վէրքերը, ինչպէս մի հպարտ տառապող, որ իր վէրքը խոր է թաքցնում իր հոգու խորքում՝ չուզենալով որ որեւէ մէկը թափանցէ այնտեղ և տեսնի սեւ տանջանքը։ Ճրագապատի սեւ լեռները քաշ էին գցել իրանց գլուխները և խորհում էին ծանր ու հանդիսաւոր։ Մութ ու սեւ քարաժայռները նման էին արցունքների, որ կախ էին ընկած հսկայ լեռների արտասուաթոր աչքերից։ Իսկ այդ մութ ու մռայլի մէջ, այդ համատարած խաւարի ծոցում՝ միմիայն աւերակների շշունջն էր, որ լսվում էր այդ տառապանքի վայրում և որը գնալով հետզհետէ խեղդում ու քարացնում էր ինձ։ . . .

Քամին կամաց կամաց հանդարտուեց ու լռեց. ես ուրախացայ՝ որ այդ յաւիտենական այցելուն կորեց իր տարօրինակ ողբը. իսկ այն մահուան հովտի վերայ պտտուած քարերն ու մացառները կորցրին իրանց յուսահատ հեծեծանքը, որ լսվում էր քամու շառաչի հետ։

Ես մօտեցայ քարաբլուրներին, չոքեցի նրանց առջեւ, իմ անզօր բազուկներով սեղմեցի նրանց իմ բաբախող սրտին, և սկսեցի ողբալ ու հառաչել՝ ինչպէս մի սգաւոր մայր, որ պինդ սեղմելով կրծքին իր մեռած զաւակի դիակը, չի՛ ուզում, չի՛ կարողանում

digitised by A.R.A.R.@

բաժանուել նրանից։ Եւ մթութեան մէջ, խաւարի այդ անհիւրասէր ծոցում՝ ես լսեցի իմ սրտի խորին հեծեծանքը, որ տարածվում էր այդ սգաւոր պատերի մէջ և նուաղում ու մօտում էր այն բիւրաւոր հառաչանքների նման, որոնցմով լիքն էր այդ քարացած օդն ու տարածութիւնը։

Իսկ աւերակներն՝ իրանց կործանուած գմբէթներով՝ տեսնում ու լսում էին այս ամէնը, և չկիտէին թէ անել, թէ՝ չէ՝ մտքել իմ հոգու գերմարդկային վիշաը։

Ցանկացած գիշերային այդ խաղաղ ժամին՝ քամին մի ուժգին թափով շառաչեց և իմ ականջին հասցրեց մի անսովոր գոռում։ Դա գեան նուաղած ձայնն էր, որ անցաւ մահուան հովի միջից։ Ո՛, թէ՝ չէ՝ սարսրելնակ հնչեց իմ ականջին այդ ձայնը. մի սարսուռ անցաւ իմ ամբողջ մարմնով, սիրտս դողաց ու գալարուեց իմ կրծքի մէջ, ինչպէս մի վիրաւոր զոհ, որ իր վերջին ոյժերն է հաւաքում իր վերայ յարձակուող թշնամուն դիմադրելու համար։

Գեան նուաղեց, նորից տիրեց նախկին լռութիւնը. բայց այդ գոռումը դեռ չէր հեռանում իմ ականջից, ինչպէս մի վշտահար պատմութիւն, որ հաչածական է դարձնում մարդկային սրտի հանգիստը։ Եւ տարտափի ու խաւարի փսփսոցները, գեան նուաղած գոռումը և սրտի ցաւագար ու վշտոտ բաբախիւնն ու հառաչը խառնուելով իրար հետ՝ տարան ինձ հեռաւոր դարերը, ոճիրներ և արեան դարերը։ ... Իսկ այդ ցաւագար բոպէին յանկարծ իմ հոգին սկսեց դողալ յաւիտենական կիշերի դառն տարակուսների առջեւ։ . . . Ինձ թւեց մի բոպէ բնութեան հիմնական օրէնքը կատարելագործութիւնն ու առաջադիմութիւնը չէ՝, այլ այնտեղ կայ մի ուրիշ հակադիր ոյժ, որ հակառակ է այս ամենին։ Գուցէ այս էր պատճառը՝ որ իմ տառապած հոգին մի բոպէ սկսեց կասկածիլ իմ դաւանած գաղափարի ճշմարտութեան մասին, և սեանելով այդ անգութ ոյժի գործած աւերը, սկսեց տարակուսիլ ու երերալ։ . . .

Այդ ժամանակ ես օգնութեան կանչեցի անապատի մարգարէներին, տառապեալ դարերի ընթացքում անցած ու գնացած գաղափարների հպարտ զինուորներին, անց կացայ կախարդների տակից, տեսայ խայտյկների բոցը, մայ մութ ու ահաւոր բանտերը, որոնք այնքան անթիւ էին ու անհամար և որոնք իրանց հալածական դրութեան մէջ անգամ այնքան վեհ էին ու աստուածային։ Եւ այդ ժամին ես զգացի այն առաւելութիւնը, որ կայ հալածուածի տրխրահառաչ ու ցաւագար մրմունջների և յղփացած հզկիների ջոռիային բրքիչների մէջ։... Ո՛, թէ՝ կարկած, որ քրքիչները մարելու են հեղհեղէ, իսկ դարերի սէրը մնալու են տխուր ու ցաւագար հառաչները։

Ցոյզերն ու խոհերը ինձ տարան դէպի ինքնամոռացութիւն։ Ցառապող հոգիների համար մի փրկարար սպեղանի է այդ ինքնամոռացութիւնը։ Մարդկային հոգին գուցէ ինքն է դուրս քաշել անհունութեան խորքից այդ կարճատեւ պատարաքը, ինքն է սրոնել ու գտել։

Եւ այսօր, հայրենի աւերակների վիրաւոր խոռոչների վերայ նստած, առաւօտեան արշալոյսի աղօտ ու տխուր ճառագայթների տակ՝ ես օրհնեցի այդ ինքնամոռացութիւնը։ Բայց կենդանութեան ամէն մի նշոյլ որ զարթնում էր կապուտակ երկնքի վերայ և կամ մահուան հովի մէջ՝ իմ հոգին լցնում էր նոր յոյզերով, նոր տանջանքներով։ Զեն զարթնում ու կենդանանում նրանք, որոնք մի ժամանակ կանգուն էին ու հպարտ, իսկ այսօր անքուն ու հառաչում են և՝ մեռնող վերջալոյսի և՝ դեղատեսիլ արշալոյսի հետ։

Իսկ տանջանքի ու յուսահատութեան այդ սոսկալի բոպէին՝ մայր աւերակի սեւ ու լուռ բացուածքէն՝ իր գլուխը նորից դուրս հանեց լռութիւնը և խաւարի միջից շշնջաց.

— «Տես այս մահարձանը և կարդա նրա վերայի գրուածը»։

Այնտեղ, այն քարակոյտերի անխնամ թափուածքի մէջ՝ ես տեսայ մի մամուռապատ գամբարան, որի վերայ գրուած էր.

«Աշոտ Ողորմած թագաւոր Հայոց»։

Ցունկի չոքեցի այդ սրբազան աւանդի առջեւ և համբուրեցի նրա մամուռապատ քարերը. իմ աչքերից թափուեցան արտասուքի

digitised by A.R.A.R.@

յորդ կաթիլներ և սիրտս խեղդուեց հառաչանքների անընդհատ աղմուկից . . .

« Աշոտ Ողորմած . . . »

Հասկացայ այժմ, թէ ինչի՞ էք դուք աւեր ու կործանուած, ո՛վ հայրենի աւերակներ, և թէ ինչի՞ էք հառաչում ու ողբում այսպէս անվե՛րջ ու անընդհա՛տ։

Բարեւ Ձեզ։

ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈՒԵԱՆՑ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՊԱՇԱՐՄԱՆ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ
ԵՒ ԹԱՂՈՒՄՆ ԴՈՒԴՈՆԻ

Իսկ անդին ալ Բուլիոն կը դիտէ բարձր տեղէ
Ամրաշէն զօրեղ քաղքին դիրքն և արուեստն հնարակերտ։
55. — Քաղաքն Երուսաղէմ ձըգուած է զոյգ բլրոց վրայ,
Բարձրութեամբ անհաւասարք, ճակատ ճակտի դէմ դրուած.
Երկուքին մէջտեղէն կ'երկըննայ ձոր մը բաժնող
Թէ՛ քաղաքն երկու մասի և թէ՛ մէկ բլուրը միւսէն.
Ամուր և անառիկ դըրսուանց երեք կողմանէն,
Չորրորդէն անըզգալի վերելքով ներս կը մըտցուի.
Սակայն այս կողմն աւելի դեռ բարձրաբերձ պարսպօք
Պաշտպանուած է, և դիրքովն հիւսիսային դին կ'իյնայ։
56. — Քաղաքին մէջ աւազանք կան, ուր կ'երթան կ'ամփոփուին
Անձրեւէն ձեւացած ջուրք. կան նաեւ մօրք և աղբիւրք.
Սակայն դուրսը չորս կողմէն դալարէ զուրկ է գետինն,
Ամուլ և անջրդի ակունքներէ, վտակներէ.
Եւ ընաւ կանաչազարդ ճոխ ծառաստան մի չըկայ,
Որ փթթի և ամառուան շոգին հովոց մ'ընծայէ.
Այլ միայն անտառ մը վեց մղոն հեռուէն կ'երկըննայ,
Վնասակար իւր հովանեօք, զարհուրելի մութ տեսքով։
57. — Արեւուն ելած դեհէն՝ ուր այդ անտառը կ'աճի,
Երջանիկն Յորդանանու ազնիւ ալիք կը հոսեն.
Իսկ անոր հակառակ դին՝ ուր արեւ կը մըտնէ,
Միջերկրեայ ծովուն ափունք կը տարածուին աւազուտ։
Հիւսիսի կողմն է Բեթէլ, այն որ սեղան բարձրացուց
Ոսկեղէն երընջին, հոն Սամարիան ալ կ'իյնայ.

digitised by A.R.A.R.@